

գին մեղմ եւ անուշաբոյր կ'ըլլայ եւ բնափիռ-
նի այնպիսի քիչ քանակութիւն միայն կը բո-
վանդակէ, որ թունաւորում երբեք կարելի
չ'ըլլար: Բայց եթէ այս բարեխառնութեան
սահմանները չպահուին, այն ատեն ծուխը սպի-
տակ, ծանր ու թանձր կ'ըլլայ եւ անհաճոյ հոտ
մը կը սփռէ: Ասոր հետեւութիւնն այն կ'ըլ-
լայ որ ուրիշ այլեւայլ թունաւոր հիւթեր ի-
րարու հետ կը միանան, որոնք իրենց վնասա-
կարութեամբն յաճախ Բրուսսիկայի Ասիդ (Acide
prussique) ալ կը գերազանցեն, այնպէս որ
մեծագոյն չարեաց ծագումն ասով շատ դժբա-
կինայ մեկնուիլ: Այսպիսի թունաւորման երեւ-
ոյթք առաւել կամ նուազ ժամանակամիջոցին
մէջ կը կրկնուին եւ մարմնոյն առողջութիւնը
կը խանգարեն: Սակայն պէտք է խոստովանիլ
որ ճինաց մեծամասնութիւնն այս վտանգին
ենթարկեալ չէ: որովհետեւ Փիղիքական եւ
հոգեկան գրգիռ ունենալու համար հարկա-
ւորէն աւելի փփոն չեն գործածեր, ինչպէս
նաեւ մենք ալ նոյն վախճանաւ չափաւոր քա-
նակութեամբ գինի կամ գարեջուր կը խմենք
առանց մարմնոյն վնաս հասցնելու:

Կարող ենք ըսել որ ճինացիք այս մասին
ըստ բաւականի ժուժկալ են, ինչպէս յԱրեւելս
գինի կամ օղի խմողներուն համար ալ կրնանք
հաստատել թէ արբեցութեան մատնուած չեն:
Ընդհակառակն Եւրոպացիք՝ որ իրենք զիրենք
ափիոնի կու տան, սովորաբար չեն կրնար չափը
պահել, եւ նոյն իսկ իրենց քով աւելի յաճախ
հանդիպած աղէտալի հետեւութիւններէն ալ
գժբախտաբար չեն սխափիր: Եթէ յԱրեւելս
բնակող Եւրոպացիներ ըստ բաւականի զօրաւոր է
ափիոնի նկատմամբ ամէն չափազանցութենէ հեռի
կենալու, ոչ միայն ամենեւին վնաս չի կրեր,
այլ մանաւանդ թէ առողջապահական առաւել-
ութիւն մ'եւս կ'ունենայ: Ի գովութիւն Արեւ-
ելացց սա ալ յաւելուք որ ասոնց քով ալ
քղի գործածութիւնը որ Եւրոպա այնչափ զո-
հեր կ'ունենայ, գրեթէ ամենեւին չկայ: Այն
ամէն գաւառաց մէջ՝ ուր ափիոն կը ծխուի, չի
տեսնուիր որկրամոլութենէ զրդեալ խորշերի
վարմունքը, ի բաց առեալ Եւրոպացի բայց ի
մասնաւորի անգղիացի նաւաստիներէ շատ յա-
ճախեալ գինեատներուն մերձակայ բնակիչք:

Բայց ցաւալին այն է որ այս նկատմամբ
իրենք զիրենք չափու մէջ պահող Եւրոպացիք
մեծամասնութիւն չեն կազմեր. մեծ վտանգն
այն մոգիչ գրգիռն է, զոր ափիոնը գործածող-
ներուն կը շնորհէ. այն անգիմազրելի բռնու-

թիւնը՝ զոր ափիոնը կը գործէ իրենց կամաց
զօրութեանը վրայ. որոշ չափը տակաւ շատցը-
նելու պէտքը՝ միեւնոյն զգացումն յառաջ բերե-
լու համար: Հասարակ ժողովրդէն աւելի հա-
րուստ զեղև մարդիկ անձնատուր եղած են սոյն
մոլութեան, որոնց հոգ չի պատճառեր ափիոնի
բարձր գինը, ի պակասութեան զբաղմանց եւ
աշխատութեան՝ միշտ իսկ կազմ եւ պատրաստ
են իրենք զիրենք այս դատապարտելի զգայա-
րանաց թմբրութեան անձնատուր ընելու:

Հարուստներն իրենց ափիոնը տունը կը
ծխեն, հասարակ մարդիկ կրպակներու մէջ, որ
այս վախճանաւ հնդկեղեգէ բազմոցներով ա-
ռանձին տեղ մը կը բռնէ: Եւ ինչպէս դժբախ-
տաբար Եւրոպա ինչ ինչ գործաւորք իրենց
տարժանելի քրտանց արդիւնքը մեծաւ մասամբ
ըմպելեաց կու տան, այսպէս նաեւ ճննացի վարձ-
կանն իւր վաստակն ափիոնի կրպակներուն մէջ
կը վատեն, թէեւ հասարակօրէն արդէն մի ան-
գամ գործածուած ափիոնը կը ծխէ: Ստոյգ է,
մի անգամ գործածուած ափիոնը կիսով չափ
աժան կ'ըլլայ, սակայն եւ այնպէս Եւրոպա
գտնուած թմբրեցուցիչ ըմպելիքներէն շատ աւ-
ելի թանկագին է: Համեստ ծխողներն ու թերա-
վարժներն օրըստօրէ 4—5 կրամ կը սպառեն,
բայց վարժողներն եւ այնպիսիք՝ որ տարիներով
ծխելով՝ արագ զգացմանց եւ գրգռութեան
անզգայ են եղած, 15—20 կրամ, որ բարձր
գնոյն եւ ճննաց դրամական յարաբերութեանց
նայելով նշանաւոր ծախք է: Եթէ մտա-
ծենք՝ թէ արբեցողութիւնը Եւրոպայի ուժեղ
եւ հաստատամիտ ժողովրդոց մէջ ինչպիսի ա-
պականութիւն բարուց եւ կործանում կը պատ-
ճառէ, կրնանք մերձաւորապէս գուշակել՝ թէ
որչափ սաստիկ պիտի ըլլան այն աւերածք, զո-
րոնք կը բերէ ափիոնի չափազանց գործածու-
թիւնն անգիմազրող եւ ապիկար բնութեան
տէր ճննաց:

Թէ որչափ մեծաքանակ եւ ահագին է այն
գումարը, զոր ճննաստան ամ ըստ ամէ ասոր հա-
մար կը գործածէ, յայտնի է ափիոնի տարեկան
ներածութենէն, որ ոչ նուազ քան 7—10
միլիոն քիլոյ է. մէն մի քիլոյ 200—300 ֆրան-
քի: Ասկէ զատ օտար երկիրներէն ընդունածին
կիսոյն չափ՝ երկրին մէջ կը պատրաստուի եւ
այս ամենայն ճննաստանի մէջ կը սպառի: Դար
մը յառաջ հսկայ ու լայնածաւալ պետութեան
մէջ ամէնուրեք կը տիրէր բարգաւաճանք, օրէնք,
հարստութիւն եւ բարեկարգութիւն. ընդհա-
կառակն այս օրս աղքատութիւն եւ մեանկու-